ՄՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ. ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ
ՄԻՋԵՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, որը գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2 հասցեում, ի դեմս նախարար Ժաննա Անդրեասյանի,

և

Աստվածաշնչի թանգարանը, ԱՄՆ Օկլահոմա նահանգի ոչ առևտրային կորպորացիա, որը գործունեություն է իրականացնում Օկլահոմա նահանգում և ԱՄՆ Կոլումբիայի շրջանում, ի դեմս նախագահ և գլխավոր տնօրեն Կարլոս Կամպոյի, այսուհետ առանձին՝ «Կողմ», և միասին՝ «Կողմեր»,

Հաշվի առնելով մշակութային և պատմական ժառանգության պահպանման, ուսումնասիրման և հանրահռչակման նկատմամբ իրենց ընդհանուր հանձնառությունը,

Ընդգծելով հայկական քրիստոնեական ժառանգության, ձեռագրական ավանդույթների, հնագիտական հավաքածուների և պատմական արժեքների նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության և քրիստոնեության պատմության համատեքստում,

Կարևորելով միջազգային թանգարանային համագործակցության դերը գիտական փոխանակումների, ցուցահանդեսների, պահպանական նախաձեռնությունների, կրթական ծրագրերի և հանրային ներգրավման գործունեության միջոցով,

Նպատակ ունենալով համագործակցել Վաշինգտոնի Աստվածաշնչի թանգարանում «Հայ քրիստոնեական ժառանգություն» խորագրով մշտական ցուցահանդեսի ստեղծման ուղղությամբ,

Ցանկանալով ամրապնդել Կողմերի միջև մասնագիտական, գիտական և մշակութային հարաբերությունները՝ փոխադարձ հարգանքի, համագործակցության և փորձի փոխանակման ոգով,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

1. Նպատակ

1.1 Սույն Մտադրության նամակի (այսուհետ՝ ՄՆ) նպատակն է սահմանել Կողմերի միջև համագործակցության ընդհանուր շրջանակը թանգարանագիտության, մշակութային ժառանգության պահպանության, ցուցադրությունների, հետազոտությունների և կրթության ոլորտներում:

1.2 Կողմերը մտադիր են խթանել համագործակցությունը փոխադարձ համաձայնությամբ իրականացվող նախաձեռնությունների միջոցով, որոնք նպատակ ունեն միջազգային հանրությանը ներկայացնել հայկական մշակութային և քրիստոնեական ժառանգությունը, ինչպես նաև խրախուսել հաստատությունների միջև մասնագիտական և գիտական փոխանակումները:

2. Համագործակցության ոլորտներ

2.1 Կողմերը նախատեսում են խթանել և դյուրացնել մասնագիտական համագործակցությունը, ներառյալ՝

1) թանգարանային գործունեության, վերականգնման, հավաքածուների կառավարման, թվայնացման և ցուցադրությունների ձևավորման ոլորտներում փորձի և մասնագիտական գիտելիքների փոխանակումը,
2) թանգարանային մասնագետների, արխիվագետների, կրթական մասնագետների և հետազոտողների մասնագիտական շարժունությունը,
3) համատեղ կամ համագործակցային ցուցահանդեսների կազմակերպումը՝ նվիրված հայկական պատմությանը, քրիստոնեությանը, աստվածաշնչյան ժառանգությանը, ձեռագրական մշակույթին, հնագիտությանը և հարակից թեմաներին,

2.2 Սույն ՄՆ արտահայտում է Կողմերի համագործակցության մտադրությունները և չի ստեղծում իրավաբանորեն պարտադիր պարտավորություններ:

2.3 Առանձին նախագծերը, փոխանակումները, ցուցահանդեսները, ժամանակավոր տրամադրումները կամ համագործակցության այլ ձևերը կարող են իրականացվել առանձին գրավոր համաձայնագրերի հիման վրա, որոնցով կսահմանվեն համապատասխան պայմաններն ու կարգավորումները:

3. Համակարգում և ներկայացուցիչներ

3.1 Յուրաքանչյուր Կողմ կնշանակի ներկայացուցիչ, որը պատասխանատու կլինի սույն ՄՆ շրջանակներում գործունեության համակարգման և հաղորդակցության ապահովման համար:

3.2 Կողմերը կարող են կազմակերպել կանոնավոր հանդիպումներ՝ առկա համագործակցությունը քննարկելու, ապագա նախաձեռնությունները ծրագրելու և համագործակցության ընդլայնման հնարավորությունները գնահատելու նպատակով՝ ինչպես առկա, այնպես էլ առցանց ձևաչափերով:

4. Ֆինանսական պայմանավորվածություններ

4.1 Սույն ՄՆ չի առաջացնում որևէ ֆինանսական պարտավորություն Կողմերի համար:

4.2 Սույն ՄՆ շրջանակներում համագործակցության իրականացման համար անհրաժեշտ ծախսերը Կողմերը կհոգան և կսահմանեն առանձին համաձայնագրերով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1 Սույն ՄՆ ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման օրվանից և գործում է երեք (3) տարի ժամկետով, քանի դեռ Կողմերից որևէ մեկը՝ ուժը կորցնելու սկզբնական ժամկետի ավարտից երեսուն (30) օր առաջ, գրավոր կերպով չի տեղեկացրել մյուս Կողմին՝ այն դադարեցնելու իր մտադրության վերաբերյալ:

5.2 Սույն ՄՆ կարող է փոփոխվել ցանկացած ժամանակ՝ Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, որը կիրականացվի առանձին արձանագրությունների ձևաչափով: Նման փոփոխությունները ուժի մեջ կմտնեն համաձայն սույն հոդվածի 5.1 կետի դրույթների:

5.3 Սույն ՄՆ մեկնաբանման կամ կիրառման շուրջ Կողմերի միջև ծագած ցանկացած վեճ կհանգուցալուծվի դիվանագիտական խողովակներով իրականացվող խորհրդակցությունների միջոցով:

5.4 Սույն ՄՆ շրջանակներում իրականացվող առանձին գործունեությունները, ներառյալ ցուցահանդեսները, ժամանակավոր տրամադրումները, պահպանական ծրագրերը, հետազոտական նախաձեռնությունները, փոխանակումները կամ դասախոսությունների շարքերը, կարող են կարգավորվել Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերով:

5.5 Սույն ՄՆ չի հանդիսանում միջազգային պայմանագիր և Կողմերի համար չի առաջացնում Հանրային միջազգային իրավունքով ներքո որևէ իրավունքներ և պարտավորություններ:

Ստորագրված է երկու (2) բնօրինակով՝ հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Ստորագրված է Երևան քաղաքում, 2026 թվականի մայիսի 26-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	**ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ՝**
ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ **Նախարար**	**ԿԱՐԼՈՍ ԿԱՄՊՈ** **Նախագահ և գլխավոր տնօրեն**
[signature]	Carlos Campo